

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ձր.  
Վեցամսեայ . . 6 "


ԱՐՏԱՍՈՒՄԱՆ

Իրիւն թիւ ձեկ ծրարով  
Տարեկան . . 14 Ձր.  
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2,60 Տօլար  
Վեցամսեայ 1,50 "  
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոթացման տուր  
20 անդրիս



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵՄԱՐԹԻ ԵԻ ՇԱՐԱԹ

ՀԱՍՏԵ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Դրոշմիւնք եւս  
չեմ տրուիր

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐ

Բարիդի մէջ հրատարակուող Մարքէն կէս-պաշտօնական օրա-  
թերթին խմբագրապետը՝ Մ. Ստե-  
ֆան Լոզան, նկատի առնելով Հա-  
յաստանի ու Մակեդոնիոյ ինպատ-  
Շաթօ տ'Օի մէջ կազմակերպուած  
մեծ միթինկին փորձերուն թեւա-  
Յրանսայի ժողովուրդին շահագը-  
գութիւնը, յատկապէս այս առ-  
թիւ Յրանսայի արտաքին գոր-  
ծերու նախարարին կարծիքը ի-  
մանալ փափայքէր էր։ Մ. Տէլքա-  
սէ Մակեդոնական տագնապին մէջ  
իր հետեւելիք քաղաքականու-  
թեանը մասին ըրած է հետեւեալ  
յայտարարութիւնները։

«... Պէրլինի դաշնագիրը ստո-  
րագրող բոլոր մեծ պետութեանց  
շահքերուն՝ ինպատակ Յրանսայի օ-  
րինական ու եռանդուն գործակցու-  
թեանէն աւելի՝ ալ ինչպէս ինչ կը պա-  
հանջեն. կուզեն որ ես ուրիշներէ  
զանազանութիւն ու բաժնուիմ. կը  
պահանջեն որ ամբողջովին Յրան-  
սայի վրայ ծանրացնեն գործի մը  
պատասխանատուութիւնը, որ ամէն  
բանէ աւելի հարկ է որ միջպագա-  
յին խնդիր մնայ. բռնի ուժի՝  
գիմելու եմ իրաւունքը վերականգ-  
նելու համար. նետուիմ արկածի  
մը մէջ, ուր գոնէ պիտի սառնեցնեմ  
բարեհաջակամ տրամադրութիւն-  
ներ, որոնք լաւ գործի մը սիրոյն  
իրենց աջակցութիւնը ցոյց տալու  
պատրաստ են։ Չէ՞ որ այդպէսով  
յայտնի կ'սկսած մը յառաջ պիտի  
բերէի. չէ՞ որ այդպէսով կ'իյնամ  
ինքս ալ և ուրիշներն ալ՝ սոսկալի  
վտանգի մը մէջ ձգելով, կերպով  
ընդհարում մը, որուն ծանր հե-  
տեւանքները ոչ ոք այս րոպէին  
նախագուշակելու կարող չէ։

«Ոչ, ես երբեք այդ բաները չեմ  
ըներ, որովհետեւ արտաքին գոր-  
ծերու նախարար մը այդպիսի բա-  
նէր ընելու կարող չէ. որովհետեւ  
Յրանսա իրաւունք չունի յատկա-  
պէս իրենք չեղած նպատակի մը  
համար վտանգի ենթարկել իր ե-  
րեսնամեայ աշխատանքը, ջան-  
քերն և ոյժերը»։

Տէլքասէի այս խօսքերէն բար-

կութիւն զգալով, Մ. Լոզան բա-  
ցազանջեց. «Աւագ, ո՛ր է այն  
օրը, երբ սրտի ձայնը գիտակ-  
ցութեան հետ միացած, պիտի հնչե-  
ցնեն միայն մէկ լար, միայն մէկ  
ձայն»...

Այս տեսակցութեան Մարքէնի  
մէջ երեւնալուն հետեւեալ օրը՝  
Ժ. Ժորէսի «Այժմ ժողովուրդին  
առջեւ կը գտնուինք» խորագրով  
յօդուածը երեւցաւ հետեւեալ պա-  
րունակութեամբ։

«Պ. Ռոշֆօր դժգոհութիւն կը  
յայտնէ Պ. Տէլքասէի, Բրէ-  
սանսէի և ինչ, թէ մենք Հայկական  
և Մակեդոնական գործերու մա-  
սին Շաթօ տ'Օի մէջ ժողովուրդի  
առջեւ խօսեցանք, փոխանակ այդ  
մասին խորհրդարանին մէջ երես-  
փոխաններուն ու պատասխանատու  
կառավարիչներուն առջեւ խօսելու։  
Անկա (Ռոշֆօր) կը մոռնայ թէ  
Պ. Բրէսանսէ աւելի առաջ խոր-  
հրդարանին մէջ հարցապնդելու  
առաջարկ մը ներկայացուցած է եւ  
օրակարգի անցնել տուած է։ Տասը,  
տասն և մէկ օրէն այդ սուր և տան-  
ջող խնդիրը կը յուզուի խորհրդ-  
արանին մէջ և Բրէսանսէն կա-  
րող կըլլայ առաջ մղել արտաքին  
գործոց նախարարութիւնը և ցոյց  
տալ անհրաժեշտութիւնը մեծ քա-  
ղաքականութեան, այն անթիւ  
փաստերով որ հրապարակ եկաւ  
Շաթօ տ'Օ թատրոնի մէջ ժողո-  
վրդեան խղճին եւ գիտակցութեան  
առջեւ։

«Երբ մեր արտաքին գործոց  
նախարարները կը հասկնան թէ  
մեր երկրի հանրային կարծիքը  
համաձայնած ու հաստատուած է,  
թէ ան պատրաստ է ուղղել սխալ-  
ները և պաշտպանել բարի ու ազ-  
նիւ ձգտումները, այն ժամանակ  
անոնք ալ ժողովրդին հետ կը խօ-  
սին աւելի հաստատ և աւելի ան-  
կեղծ շնչով և ա'յն ատեն՝ անոնք  
կը գործեն այնչափ հիմնուած Եւրո-  
պայի կարծիքին վրայ, որչափ  
Յրանսայիին վրայ»։

«Այսպէս, կը գոչէ Ժորէս, ժո-  
ղովուրդը բոլորովին ճշմարտու-  
թեան և արդարութեան կողմնա-  
կից է։ Եթէ կառավարութիւնն

րը գիտնան ըստ այնմ գործել,  
պէտք է անոնք մարդավայել կեր-  
պով կարգադրեն թէ՛ Մակեդո-  
նական և թէ՛ Հայկական խնդիր-  
ները, առանց աշխարհի խաղա-  
ղութիւնը վրդովելու, առանց ո-  
տընձգողներու անձնասիրութիւնը  
գրգռելու։ Ահա թէ ինչո՞ւ համար  
պէտք է գիմել մարդկութեան  
զգացմանց և գիտակցութեանը»։

ՔԻՉ ՍԸ ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Ա.

Հնչական ընկերներ.

Հնչական միացեալ կուսակցութեան  
ներքին կապերը անխղիւ պահելու,  
Հնչական կուսակցութեան վարկը,  
ազդեցութիւնը, ուժը եւ խոյանքը  
փրկելու համար՝ հարկաւոր է, միմիայն,  
ամէն Հնչական ընկերի մէջ, ինչ ուր  
դատողութիւն...

Հնչական կուսակցութեան ներկայ  
տխուր միջոցապին մէջ, ի վտանգի է  
ոչ միայն Հնչական կուսակցութիւնը,  
ոչ միայն յեղափոխական ուժերու  
ընդհանուր միացման ցանկալի հե-  
ռապատկերը, որ մեր կարօտակէզ  
աչքերուն առջեւ ունինք, այլ նոյնիսկ  
նայկալի դատը։

Ու, այս ահաւոր պատասխանա-  
տուութեան առջեւ շարժող Հնչական  
կուսակցութեան փառաւոր Միութիւնը՝  
ալեկոծութեան մէջ է այսօր. մեծ  
նպատակին համար ճամբայ ելած այս  
նաւը փրկելու համար, մահաւանդ  
այս սպառնալիք օրերուն մէջ, հար-  
կաւոր է լուրջ եւ գիտակից ղեկավա-  
րութիւն, հարկաւոր է իւրաքանչիւր  
Հնչականի մէջ գոնէ քիչ մը դատո-  
ղութիւն։ Ուժեղ են իրար հակա-  
սող, մէկը միւսին դէմ եկող եւ յը-  
ձանք կազմող հովերը։ Քիչ մը դատո-  
ղութիւն։

Կարգապիւք անշուշտ ուսանայ բար-  
բառով Հնչակի թիւ 1-ը. կարգապիւք  
Ամերիկայէն ինչ որ «Բ. Պատգամաւո-  
րական Ժողով» մը կողմանէ ղրկուած  
«պաշտօնական յայտարարութիւն»ը,  
ու տեսաք որ ատոնք սահմանուած  
չէին բորբոքած կրակին վրայ ջուր  
լեցունելու. այլ իւր. ատոնք սահմա-  
նուած չէին խղճան վտանգին առջեւ  
առնելու. այլ բացուած փոքրիկ ան-  
ջրպիտը լայնցունելու, եւ, Հնչակ-  
եան Միութիւնը պահելու կեղծ ու  
կեղծաւոր խօսքերու քողարկումին  
տակ, կարողութիւն ? ամբողջ նախկին  
Վերակազմեալ հատուածը եւ նախկին

հին հատուածին մէկ կարեւոր մասը։

Քիչ մը դատողութիւն, եւ, բաւա-  
կան պիտի ըլլայ դատապարտել այդ  
հրէշային յայտարարութիւնները, ո-  
րոնք կը հրամցուին ոչ միայն Հնչակ-  
եաններու. այլ եւ հայ ժողովուրդին,  
յայտարարութիւններ որոնք նախա-  
տինք կը բերեն ոչ միայն Հնչական  
կուսակցութեան. այլ ամբողջ հայ յե-  
ղափոխութեան. կարծես հաւատա-  
քնութեան դարբնու մէջ կը գտ-  
նուինք. «աշխարհն է որ կը շարժի»  
ըսողը տանջարան կառաջնորդի.  
«Կրօնքին դէմ դաւաճանք է. անհա-  
ւաս է...»։ Ստոր տաճիկները կը ներ-  
կայացունին՝ որոնք նեղը ինկած ա-  
տենին «Կրօնքի հայոցից» ըսելով  
Միւսիւլմաններուն մոլեռանդութեանը  
գիմում կը նեն, փափաք փափաք  
Ամբաստանութիւնը այնքան մեծ է  
որ՝ ալ ո՞վ փափաք կը հարցունէ. «Յե-  
ղափոխութեան դէմ դաւաճանք են...»  
Թիւրք կառավարութեան վարձուած  
են յեղափոխական կուսակցութիւն-  
ները տապալելու... Այս ահաւոր  
յայտարարութիւններուն առջեւ՝ ո՞ր  
յեղափոխականին, ո՞ր հայրենասէրին  
արիւնը գլուխը չի ցատկել, ալ ո՞վ  
կրնայ հանդարտ մնալ եւ պաղարիւ-  
նութիւնով մտածել, ապացոյցի սպա-  
սել։ Այս հրէշային մտածումով է որ  
սոյն առեւի ժամատանութիւնները,  
զրպարութիւնները հրապարակ կը  
նետուին «չառ փաստեր, չառ վաւե-  
րաթղթեր ունինք» ըսելով, առանց  
սակայն, ու եւ փաստ, որ եւ է վա-  
ւերաթղթեր ներկայացունելու։ Ես ի-  
րաւունք ունիմ հաւատալու, սակայն,  
թէ ոչ Հնչական ընկերները եւ ոչ հայ  
հասարակութիւնը չպիտի կլլեն այդ  
ամբաստանութիւնները՝ առանց փա-  
ստի, առանց վաւերաթղթի։

Հարկ է որ փութամ ըսել թէ, «վա-  
ւերաթղթերը որոց անունը միայն  
տալով կը բաւականանայ ուսաբար-  
բառ Հնչակը՝ ուրիշ բան չեն, այլ  
վերակազմեալ Հնչական հատուածի  
մասնաճիւղերու պատկանած պաշտօ-  
նական թղթերը՝ որոնք ձուլումի առ-  
թիւ դրուեցան միացեալ մասնաճիւղե-  
րու տրամադրութեան տակ։ Յայտնի  
է ուրեմն թէ, եթէ անոնք իրենց մէջ  
պարունակած, ըլլային որ եւ է դա-  
ւադրութիւն Հնչական կուսակցու-  
թեան դէմ մասնաւորապէս եւ հայ յե-  
ղափոխութեան դէմ ընդհանրապէս,  
ինչ որ հաւատաւորները կը ճգնին,  
բնական է որ վերակազմեալ հատ-  
ուածը զանոնք ոչնչացունէր ու ոչ թէ  
տաներ տար անոնց ձեռքը՝ որոնք դէմ  
սարքուած պիտի ըլլար այդ սոսկալի  
«դաւադրութիւնը» ?

Այս առթիւ պիտի բաւականանամ  
լոյս մը ձգել իմ անձիս դէմ եղած  
կարգ մը հրէշային անուանարկումնե-



բուն վրայ՝ որով կարելի կըլլայ ճանչնալ այդ յայտարարութիւններուն ամբողջ արժէքը:

Բացարձակ սուտ է յայտարարութիւնը թէ, «Ամերիկայէն Լօնտօն երթալու ատեն, միայն ճանապարհածախսի համար նահանգային վարչութիւնէն ստացիր եմ 300 տոլար»:

Ամբողջ գումարը որ ստացեր եմ նահանգային վարչութիւնէն ճանապարհածախսի եւ ատեն մը Լօնտօն ապրելու համար՝ եղած է միայն 119 տոլար:

Բացարձակ սուտ է յայտարարութիւնը թէ, ընտանիքիս Լօնտօն գալու ճանապարհածախսը նահանգային վարչութիւնէն հոգացուած է:

Ընտանիքիս ճանապարհածախսին համար ոչ նահանգ. վարչութիւնէն եւ ոչ որ եւ է հասարակական գրամէ ոչ մի սանթիմ տրուած չէ բնաւ:

Այդ պարունները, որ այսօր զիս կը քանան ներկայացնել իբր սոսկալի հակայնդափոխական մը?, իբր հայ յեղափոխութեան զէմ գաւաղորդ մը?, իբր թուրք կառավարութեան գործիք մը?, նոյն այդ պարուններն էին որ Ամերիկայէն մեկնելէս միայն քանի մը օր առաջ՝ Հնչակեան կուսակցութեան միացեալ կեդրոնէն հետեւեալ հրաւերը կողղէին ինծի:

«Պ. Գարեգին Չիթճեանին

Ուստր

«Սիրելի ընկեր,

«Պուկարիոյ» եւ Ռուսմանիոյ համար գիտակից ու պարտաճանաչ ներկայացուցչի մը պէտքը անհրաժեշտ դարձած ըլլալով՝ կեդր. վարչութիւնս յարմարագոյն ընտրութիւնը կատարած ըլլալու խորին համոզումով, որոշեց ձեզ յանձնել այդ կարեւոր պաշտօնը:

Ձեր կարողութիւնը անվիճելի է այս գործին մէջ: Եւ տարակոյս չունինք որ՝ Հնչակեան միութեան յետոյ՝ աւելի քան երբեք ուժգնօրէն գործին կապուած մնալու ձեր կամաւորութեամբը, պիտի ուզէք ձեր աջակցութեան լայն բաժինը բերել, մեր բոլոր ճիգերուն:

Ձիւ՝ Հնչակեան կուսակցութեան մասնաւորապէս եւ հայ յեղափոխութեան

ընդհանրապէս վտանգաւոր? ցուցուած Հնչակեան այնքան կարեւոր ընկերներու շարքին մէջ գնող՝ եւ ինքզինքնին «կենդանո» անուանող երեք մարդերն էին որ Լօնտօն հասնելէս, Ամերիկայի նահանգ. վարչութիւնը, եւ իմ լիազօր պատուիրակի պաշտօնս ջնջանալ ճարտարաւորութիւնէն ետքը, հետեւեալ նամակը կուղղէին ինծի:

«Սիրելի ընկեր Պ. Չիթճեան

«Բաւական ժամանակից ի վեր վարչութեան նիստերը, որ դադարել էին «հրաժարուած ընկերներ» պահանջով՝ «մինչեւ նրանց յաջորդները ժամանակը, բերելու անհրաժեշտ արգէն վերակտուած էին»:

«Համարում Ձեր մասնակցութեամբ՝ «բայց այսօր դուք չեկաք եւ մենք ձեր գործը սպասեցինք ձեզ մինչեւ ցերեկուայ ժամը 12ը: Սրանով յայտնեալով ձեզ, որ նրանք սկսուած են «առաւօտեան 9 ժամին եւ տեւում է «մինչեւ 12 1/2ը: խնդրում եմ վարչութեան ղեկավար լինելու նշանակելով «ժամանակին, որպէս զի ընթացք աւելի գործերին, կարելի լինի կարգադրել ընթացիկ խնդիրները»:

Ս. Սագունի

Հ. Արզումանեան

Ս. Տաշիրեան

Լոնդոն, 1902 թ. Հոկտ. 3

Այդ երկու նամակները իբրեւ վաւերացում, բաւական չեն ցուցնելու թէ ներկայ ինքնակոչ «կենդանո» երեք անդամները, գոնէ մինչեւ վերոյիշեալ թուականը՝ իմ վրայ իրեւ Հնչակեան գործիչի եւ իբր յեղափոխականի՝ անպայման վստահութիւն ունեցեր են: Այդ մոլեգնած պարունները պարտական են Հնչակեան ընկերներու եւ հայ հասարակութեան առջեւ գնել բոլորովին նոր, վերոյիշեալ թուականէն ետքը, երեւան եկած այն զէպքերը եւ իրողութիւնները, եթէ կան, որոնք անհրաժեշտօրէն երեւան բերեն իմ բոլորովին տարբեր մարդ մը ըլլալու:

Գ. Պ. Չիթճեան

ՆԱԽԱԿ ԳՕՆՍԹԱՆՑԱՅԷ

... Խմբագիր,

Ներկայ 1903 տարւոյ «Ե...»-ի փետրուար 12 թիւ թերթին մէջ յոգուած մը երեւցաւ Ճարլս Իշխան ստորագրութեամբ, Գօնսթանցայէ գրուած, տեղւոյս Տէր Յակոբ քահանայի հասցէին ուղղեալ հայհոյութիւններով ու զրպարտութիւններով լեցուն. այդ յոգուածը քաղաքիս ուղղամիտ հասարակութեան ոչ միայն զգուանք պատճառեց, այլ նաեւ զայն գրողին սեւ սիրտն ու խառնակիչ ոգին երեւան հանեց:

Պ. յոգուածագիրը իր իշխանական փրճուոյց դիմակին տակէն ալ մեզի ծանօթ է. այս տեսակ ազգային փափուկ խնդիրներուն մէջ, եթէ քաջութիւն ունէր, թող վար առնէր այդ գ'մակը եւ իր իսկական գոյնովը երեւան գար իր բոլոր ամբաստանութեանց փաստերովն ու ապացոյցներովն զինուած:

Այս բանը միգի ալ հաճելի պիտի թուէր, եւ փոխանակ իրենց զգուանք զգալու, պիտի համակրէինք իրեն, եւ միշտ պիտի յարգէինք զ'նրոյ Ռուս-ճոգի նախկին տնօրէն վարժապետ եւ այժմ մեզ հոգեւոր հովիւ՝ Տ. Յակոբ քահանայ ինչ որ ըլլայ՝ գոհ թողուցած է մեզ, եւ իրեն վերապրուած ակեղ ջիւղ յանցանքներէն ոչ մէկը այդ արժանատի կղերականին վրայ տեսնուած չըլլալուն զօրաւոր ապացոյցն էր վերջերս ներկայ թաղական խորհրդոյ մէջ յախուռն որոշման զէմ յառաջ եկած ժողովրդային մեծ յուզումը:

Անթերի մարդ չը կրնար ըլլալ, սակայն մեր քահանայ իր ութ տարուան պաշտօնավարութեան մէջ ցոյց տուած թէ մինչեւ հիմա հոս պաշտօնավարող քահանայներուն ամենէն պարկեշտն եւ ամենէն արժանաւորն եղած է: Եւ զարմանալին ալ այն է որ, երբ վերջերս թաղ. խորհուրդը քահանան պաշտօնանկ կը հռչակէր, Ճարլս Իշխանին վերադրած յանցանքներուն եւ ոչ մէկովը կրցած էր դատապարտել, որոնք եթէ ստոյգ բը-

լային, պիտի բաւէին ոչ թէ միայն պաշտօնէ դադարեցնելու, այլ մինչեւ իսկ կարգադրել ընկու: Քահանային վերագրուած յանցանքներուն աւելին մեծերն էին. նախ Տարի մը առաջ Ձատկի առաւօտունը զպիտ վարժապետին հեղեցի չեկած ըլլալուն համար սրտնեղիլը. երկրորդ՝ թաղ. խորհրդոյ մկրտութեան, պսակի եւ նշնեցեալի համար գծած մէկ օրէնքին՝ մկրտութեան մասին դիտողութիւնը: Երրորդ, գիտել տալով որ մկրտատի թեան մասին քիչ մը օրէնքը մեղմել պէտք է, որ մի գուցէ անակնկալ պարագաներու մէջ միջեւ պաշտօնական գործողութեանց կատարուին, երախաներ մեռնին, առանց մկրտութեան: Ճամա իշխանը այն ատեն թաղ. խորհրդոյ քիչին տակ ինչու ստանցմէ աւելի ծանր յանցանքներ ու ապացոյցներ մէջտեղ չկրցաւ դնել որ միանգամ ընդ միշտ մոռնալին հասնէր, քահանան այս տեղէն ճամբով տալով (վկայ արձանագրութեան տուածը). բայց իրենք անխոհմտաբար այնպիսի ծիծաղելի ամբաստանութիւններով զինուեցան, որոնք քահանան դատապարտելի ընելէ աւելի, ժողովրդեան լուրջ դատակարարին գնահատութեան արժանացուցին: Թիրաւի, այս մասին շատ արգահատելի կը գտնենք ներկայ թաղ. խորհրդոյ վիճակը, որ բացի երկու անգամէն, (որոց մին եւ միւսն Ա. Մ. ալ բացարձակապէս իր ծայրայեղ բարեմտութեանը զոհ եղած է), մնացեալներն կատարելապէս մեքենայ մը դարձած են Ճարլս Իշխանին ձեռքը, եւ խելք կը սովորին անկէյ. թե՛րեւս պ. յոգուածագիրը ասոնց վրայ ձեռք բերած ազդեցութենէն փրցած, ինքզինքը իշխան կանուանէ, եւ կը նախատէ ուղղակի կերպով նախորդ թաղ. խորհուրդներն, զանոնք տգէտ եւ անպիտան յեղափոխականներով. այսպէս եղած է քահանային պաշտօնադատար ըլլալու խնդիրն ալ. որովհետեւ իշխանը ուղղած է որ քահանային վերոգրեալ արգարացի դիտողութիւնները յանցանք համարուին, նոյն վայրկեանին ընդունուած է առանց առարկութեան չի մոռնանք ըսելու թէ քահանային զէմ այս հալածանքը նոր չէ արդէն:

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ (60)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐԱՐԴ

ՎԵՂԱՐԱՊԻՈՐ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԷ

— Ազգային շահը կը պահանջէ՞ կառավարութեան յանձնել մեր եղբայրները, թոթովեց վարդապետը սարսաղով:

— Երկու չարեաց փոքրագոյնը... կրկնեց Տէր Կոմիտաս՝ չնչաւելով իր խօսքը:

Վարդապետը բոլոր մարմնով զողողաց... Տէր Կոմիտասի այդ վերջին պարբերութիւնն իր հոգեւոր վրայ ծանր երկաթի մը պէս ճնշեց: Պահ մը առաջ ունեցած դադարաբար միջոցաւ իր մէջ, եւզէ մը գտնուող այդ Աստուծոյ տաճարին նուիրուած պաշտօնական կերպարանափոխ վիճակի մը մէջ երեւցաւ իրեն... Օ՛հ, կարծեց թէ քահանային տեղը՝ հրէշ մը նստած էր. կարծեց թէ մարդու մը տեղը նենդութեան մարմնացումը կը պատկերասր իր աչքին:

— Կը հաւատա՞ք որ Ազգային հովեւոր իշխանութիւնը՝ չարիքն առաջն առնելու համար, այդ աստիճան ստորին պատասխանատուութիւն մը յանձն պիտի առնէ...:

— Ի՞նչ պատասխանատուութիւն կայ անոր մէջ, վրայ բերաւ Տէր Կոմիտաս: Միթէ մէկը ամենուն համար չզոհուի՞ր... միթէ մարմնով մը մէկ անդամը չկորուցի՞ր, երբ անդամներն զէք մը ունենայ:

Ըստ իս, ապագայ չարիքը բաժնաւոր համար՝ աւելից զատ ուրիշ միջոց չկայ: Եթէ ոչ, պէտք է որ ձեռքերը ծալլենք ու սպաննանոց քաշուած ոչխարի մը պէս, անոնց հետեւինք ամենայն համակերպութեամբ: Եթէ ոչ, պէտք է որ աչքերնս զոյնեք ու կուրորէն քաշկուտուինք գերեզմանի մը մէջ: Ձեռք գրեմք, հայր սո՛ւրբ, իմացած էք թէ այս մէկ տարուան մէջ քանի՞ քանի՞ գոհեր տուինք: Մէկը կը սպաննուի՝ մատնիչ անուան տակ, միւսը կը սպաննուի՝ զրամբ մերժելուն համար... վերջապէս ամեն օր զո՛ւ մը կը գտնենք մեր յարկերուն տակ... Ի՞նչ ունէր սա ինեղձ Առաքել էֆէնտին, զոր տուէնին մէջ սպաննուէն ետքը՝ չը թողուցին որ եկեղեցական կարգ ու կանոնին համաձայն թաղուի՝ անձնասպան է ըսելով:

— Անձնասպան չէ՞ր այդ մարդը, ընդհանուր վարդապետը խղճուելու մօտ չեւաղով մը:

— Ամենեւին... Ի՞նչ ունէր անձնասպան ըլլալու: Դրա՞մը կը պահէք, եթէ ոչ պատիւը:

— Խիստ լաւ, ինչո՞ւ կը սպաննէին զինքը:

— Յիմար տաղրկութեամբ մը... ուրիշ ոչինչ:

— Ի՞նչ տաղրկութեամբ:

— Առաքել էֆէնտին պաշտօնեայ մըն էր կառավարութեան դուռը... մանաւանդ՝ վալի փաշային ալ սիրելի եղած էր... անա բոլորը:

— Կառավարութեան դուռը շատ հայ պաշտօնեաներ կան, ի՞նչու համար չեն սպաննել զանոնք:

— Է՛հ, նախանձը շատ բան կընէ, հայր սո՛ւրբ: Առաքել էֆէնտին իրենց կամաց համաձայն չէր ընթերցանար, այդ պատճառաւ «մատնիչ է՛ւ ազգադաւ է՛, կառավարութեան լրտեսն է...» ըսելով, խեղճ միամիտ ժողովուրդին միտքը պղտորեցին ու ամենէն ետքը սպաննեցին զինքը:

— Կեցէ՛ք... իմացածիս նայելով՝ այդ Առաքել էֆէնտի ըսած մարդերն իր մատնած է եղեր Կեմ գեղի ուսուցիչը, սո՛ւտ է ասիկա:

— Կեմ գեղի ուսուցիչը կը ճանչէ՞ք, հայր սուրբ:

— Ո՛չ... միայն թէ անուանը լսած եմ:

— Ուրեմն հաւատացէ՛ք որ այդ ուսուցիչը մատնուելու արժանի էր:

— Պատճա՞ռը:

— Նախ՝ վանքերու հասոյթները կտրել տուած էր, այնպէս որ «Պողոս» հաւաքող վարդապետները սկսան հալածուել, նախատուել ու գեղերու մէջէն վտնտուել, յետոյ՝ գեղացիները համոզած էր որ զէնքեր գնեն ու կառավարութեան օրէնքներուն հակառակին:

— Ա՛յդ է բոլորը:

— Այո՛:

— Բարեկամ էք Առաքել էֆէնտին հետ:

— Շատ մօտէն:

— Կին, զաւակներ ունի՞ր:

— Կին մը ունի որ բաւական ատենէ ի վեր ան-

յայտ չեղած է:

— Ի՞նչպէս անյայտ եղած է:

— Կը կասկածուի թէ կինն ալ չարաչար սպան-

նուած ու հետքը կորուած է:

— Տխուր բան... ամբողջ քաղաքը սարսաղելի



ներկայ թագ. խորհրդոյ պաշտօնա-  
վարութեան սկիզբներէն կսկսի՝ վա-  
սըն զի իրենց պաշտօնին սկսած օրէն  
որոշած են այս քահանան ճամբել եւ  
իրենց հաճելի եղած ծանօթ մէկը բե-  
րել. այս նպատակաւ էր որ նախ  
քանի մը ամիսներ առաջ ամա-  
կանը կտրեցին որ կամաւ հրաժարի  
Այս միջոցով յաջողած պիտի ըլլային,  
եթէ ժողովրդեան մանկաց եւ խո-  
հուն դասակարգը քահանային հրաժա-  
րականը այն ատեն պատուի չտար,  
խոստանալով իրեն որ յարմար առթիւ  
այդ խնդիրը կը կարգադրեն։ Երբ  
տեսան թէ առանց յանգաւոր հռչակելու՝  
կարելի չէր քահանան այս տեղէն հե-  
ռացնել, վերոգրեալ դատավճիռը յար-  
մար տեսան իրենց նպատակին փութով  
հասնելու համար. վճռեցին ու եկեղեցւոյ  
դռները քահանային դէմ փակեցին,  
եւ աշիւ անիւ իրենցմէ մին մեկնե-  
ցաւ որոշուած քահանան բերելու։  
Գնաց, եկաւ, թղթակցութիւններ,  
հեռագրեր, իրարու ետեւէ շարու-  
նակութեան. սակայն, այնչափով եկան.  
միւս կողմանէ ժողովրդային յուզումը  
չառցաւ իրենց դէմ, փախելու տեղ  
չկար, կանչեցին վերստին քահանան  
եւ իր պաշտօնին մէջ վերահաստատե-  
ցին։ Ահաւասիկ այս է բոլորովին ի-  
րողութիւնը եւ ճշմարտութիւնը. ձալ-  
մայի գործները բացարձակ սուտ զր-  
պարտութիւններ են, որոց պատճառը  
հիմակ չեմք ուզիք քննել հոս։ Ժո-  
ղովուրդը գոհ է իր քահանայէն, բա-  
ցի ձալման իշխանին երեքուկէս հո-  
ղիէ բաղկացեալ խմբակէն։

Ուստի կը խնդրենք որ դայս հաճիք  
ձեր պատուական սիւնակներուն մէջ  
հիւրընկալի ի հանգարտութիւն զայս  
թաղկալ մտաց։

ԳԵՐՈՎԻԷ ԵՄԻԼԻՆՍԿԻ

Քոնսթանցա, 24 Փետրուար

## ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Մտադրութիւն կայ Պոլսոյ Ազ-  
գային Հիւանդանոցին մէջ հաս-  
տատուած Ուրբանոցին աղկանց բա-

ժինը Գալֆանան Ուրբանոցը փո-  
խադրել. այդպէսով, կը յուսաց-  
ուի կարեւոր խնայողութիւններ  
ձեռք ձգել։

— Ուրբանոցը գործը այս մի-  
ջոցիս Պատրիարքարանը ամենէն  
աւելի զբաղեցնող ամենէն կարե-  
ւոր խնդիրն է. յայտնի է արդէն  
թէ՝ Խոսափելի մէջ լուսահոգի  
Սրբուհի մայրապետին կանգնած  
աղկանց Ուրբանոցը հիմնարկու-  
թիւնը ինչպիսի խեղճ ու անել  
կացութեան մը վերջը վերջը են.  
թարկուել էր. Պատրիարքարա-  
նին ջանքերուն շնորհիւ, կարելի  
եղաւ, մասնաւորներու նուիրա-  
տութեանց կոչում ըլլալով, Ու-  
րբանոցը կանգնել. Այժմ, Պատ-  
րիարքարանը կաշխատի թուրքի  
զանազան քաղաքներուն մէջ հաս-  
տատուած տեղական Ուրբանոցները  
կանգուն պահել. օտարներու կողմէ  
նպաստներու առաքումը մեծապէս  
ա՛յ պակասած ըլլալով, Պատրիարքա-  
րանը այդ անհամար նպաստընկալ  
հիմնարկութեանց նիւթական մա-  
տակարարութիւնը իր վրայ առնելու  
դժուարին՝ անխուսափելի հարկին  
առջև կը գտնուի. նպաստից Թանձ-  
նաժողովոյ որոշումով, այս առթիւ  
Պատրիարքը Նոր Տարւոյ ու  
Ծնունդի տօնին պատահութեամբ,  
«Մանուկ Թիսուսի նուէր» անու-  
նով զանազան քաղաքներ կոնդակ-  
ներ ուղարկած էր, որպէս զի Ու-  
րբանոցներու և Արհեստանոցներու  
ինչպստ նուէրներ ուղարկուին.  
մեծապէս փափաքելի էր որ Ար-  
տասհամառի քաղաքներն ալ այս  
ձեռնարկին իրենց ներած միջոց-  
ներովը օժանդակէին։

— Աթէնքի եկեղեցւոյն և զբա-  
րոցին շինութեան համար հանգա-  
նակութիւն պիտի կատարուի Ե-  
գիպտոսի մէջ։ Ասոր համար Ա-

թէնքի հոգաբարձութիւնը Եգիպ-  
տոսի Առաջնորդ՝ Տ. Թովսէփ Ե-  
պիսկոպոսի և Պօղոս փաշայի ա-  
ջակցութիւնը խնդրած է։

— Բարիլէ Սոքրուսիւնի ու-  
ղարկուած թղթակցութեան մը կը  
տեղեկանանք թէ՝ Տ. Էգնատիան իր  
հովանաւորութեան տակ առած 9  
տղաքներուն հայրական խնամք-  
ներ սկսած է տալ. ատոնցմէ  
5 հատը իր գործարանը առած է.  
իսկ չորսը վարժարան կը ղրկէ,  
միշտ իր հսկողութեան ներքեւ ու  
հայրական վեհ և անձնուէր զգա-  
ցումներով։

— Նոյն այդ թերթին մէջ հրա-  
տարկուած թղթակցութիւնը ա-  
մենատալուր գոյներով կը նկարագրէ  
նոյնպէս Գօնթէս Գօլոնայի կողմէ  
Ֆրանսայի մէջ հաստատուած Ու-  
րբանոցը, ուր սակայն 12ի չափ  
հայ որբեր կը պատասպարուին. նա-  
մակազրին տեղեկութեանց համե-  
մատ, ոչ միայն թուական հաս-  
տատութեան որբերուն նման՝ այս  
որբերն ալ իբր շահագործումի ա-  
ռատ աղբիւր մը կը գործածուին,  
այլ նոյնիքն որբանոց մը Գօնթէ-  
սին բարոյական նկարագրին նկատ-  
մամբ ալ ամենածանր ամբաստա-  
նութիւններ կը լլան. կսպանենք  
որ, Տ. Չերազ, որ Լ'Առաքելի  
մէջ մէկէ աւելի անգամներ գրեց  
Գօնթէսին այս հիմնարկութեանը  
ինչպստ, մեղի մանրամասն ու որոշ  
տեղեկութիւններ տայ, այդ ծանր  
ամբաստանութիւնները կամ հաս-  
տատելով, կամ հերքելով։

— Վէնէտիկէ Պետրիկէր Թալի-  
պալաի կը հեռագրեն թէ՝ Տ. Ար-  
փիար Արփիարեանի վրայ յարձա-  
կում գործող անձանքի անհատ-  
ները չեն ձերբակալուած։

— Հին Հնչակեաններու կողմէ  
ընտրուած Միացեալ Հնչակեան

հեղինակ անդամ, Տ. Համբարձում  
Արղումանեանի գրած մէկ նամակին  
վաւերական օրինակը մեր ձեռքը  
անցած է, զոր յաջորդիւ պիտի  
հրատարակենք, որով ընթերցողները  
բաւական որոշ գաղափար կը կազ-  
մեն թէ Տ. Արղումանեան Միացե-  
ալ հեղինակ անդամ ըլլալով հան-  
դերձ, չէ գաղափար հատուածական  
ոգի կրելէ և Նազարեթեանը կեդ-  
րոն բերելու համար գաղտագողի  
գաւազարութիւններ սարքելէ. ինչ  
որ գլխաւոր պատճառը եղած է  
Միացեալ հեղինակներ կրկին երկուքի  
բաժնելուն և կատարուած Միու-  
թեան վտանգներն։

## ԻՐԱՌԻՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Տ. Մարտիրոս Հայր. — Ձեր նա-  
մակը յաջորդիւ կը հրատարակենք։

— Մանօքը, Ս. — Ներեցէք որ ձեր  
«Հերթում»-ի հրատարակութիւնը յա-  
պաղեցաւ տեղոյ անձկութեան պատ-  
ճառաւ։ Ի մօտոյ կը հրատարակենք ա-  
նոր կարեւոր դատուած մասերը։

— Աւասուր Բրուսեան, Գալիլի. —  
Մեզ բացատրեցէք թէ ինչ բառերով  
կարելի է որակել ձեր վարմունքը զէպի-  
մեզ։ Անշուշտ կը զարմանաք մեր չա-  
փազանց համբերութեան վրայ. բայց  
պէտք է գիտնաք թէ՝ անոր չափը  
այլեւս լեցուած է եւ պարթկումը մօտ  
է ու շատ ուժեղ պիտի լինի։

## ՁՐԻ ԾՍԵՈՒՅՈՒՄ ՁԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻՐ

Պաշտօնական ազդեւոր տողը (25 տառ)  
10 սանդիւն։  
Անհատական ազդեւոր տողը (25 տառ)  
20 սանդիւն։  
Երեխանք անհատական համար 20 0/0  
զեղչ։  
Փոխարեւը դրամ կամ անհատա-  
կանը դրամ կանխիկ։

գրութեան մը մէջ է, Տէր եղբայր. շնորհիւ իրա-  
ւունք ունիք այդ խոսքերուն հակառակել . . .  
զիմանալու բան չէ։

Տէր Կոմիտաս սիրտ առաւ ու աւելի լայնօրէն բա-  
ցաւ իր հոգեւոյ միջին վարաւորը՝ պատկերացնելու  
համար անոր ամբողջ գաղափարները։ Ուստի, ամենայն  
համարձակութեամբ յայտնեց։

— Այո, մեր ամենուս պարտականութիւնն է ազ-  
գային գոյութիւնը վտանգող շարիքին հանդէպ նեղ-  
ուել ու չթողուլ որ աղէտը յառաջանայ։ Մեր ժո-  
ղովուրդը կը նմանի ոչխարի մը, որ ամեն ձայնի,  
ամեն ստուերի ետեւէն կերթայ։ Բռնե՛ք անոր  
ձեռքէն . . . ցոյց տա՛նք իր առջին բացուած ան-  
դունդը։ Թո՛ղ չխաբուի։ Ապագայ շարիքը՝ իր կո-  
րուստն է, որ անխուսափելի կը դառնայ։ Բայց թէ  
կառավարութեան ալ դիմել հարկ պիտի ըլլայ . . .  
ի՛նչ ընենք . . . կան պարագաներ՝ որուն մէջ կը  
զոհուին մարդիկ . . .

— Եթէ կառավարութեան յանձնել հարկ ըլլայ,  
պիտի կրնանք ընել։

— Ինչո՞ւ չէ . . . ատանկով մէկ երկու հոգի զոհ  
պիտի տանք ու մեր նպատակին ալ պիտի հաս-  
նինք։

— Չէ՞ որ ժողովուրդը չպիտի հասկնայ մեր ըն-  
թացքը . . . չէ՞ որ պիտի կարծուի թէ մեր կոչման  
հակառակ կը վարուինք։

— Այդպէս է. բայց հոգեւոր իշխանութեան պաշ-  
տօնեալ մը կարող է գաղափար դրծել ու ցոյց չտալ  
իր դերը։ Դիցուք թէ խլրտում մը կը նշմարեմ այս  
արուարձանին մէջ . . . առանց կասկածի տեղի տա-  
լու, տեղական ոստիկանութեան կիսազոհեմ . . . ու

կը վերջանայ ամեն բան։ Ո՞վ գիտէ թէ քահանան է  
կամ վարդապետը։ Նոյնպէս, «պողի» հաւաքող  
վարդապետ մը կարող է ծածուկ կերպով ամեն մի-  
ջոց գործածել ու յաջողել։

Վարդապետը կը խղճուէր։ Յայտնի բան էր որ  
խղճի մը չարչրկումներուն ներքեւ կը գտնուէր,  
յայտնի բան էր որ անգուսպ ու վրէժխնդրական  
տրամադրութիւն մը կը թելադրէր զինքը . . . մէկ  
խօսքով՝ յայտնի բան էր որ սարսափ ու հրատապ  
պարբերութիւն մը իր կողմէն կը ճղմէր։ Նստած  
տեղէն ակամայ չարժում մը ըրաւ, ու պոթկալու-  
մօտ ձայնով մը բացազանչեց։

— Տէր Կոմիտաս . . . մատնութեամբ դիմեմք։  
Ու, մեղքնազար, ձեռքը վեղարին տարաւ, զայ-  
նովով մէկդի նետեց զայն ու ցոյց տուաւ իր կե-  
րպարանը։

Տէր Կոմիտաս անմիջապէս ճանչցաւ . . . ուստի  
մրմնջեց։

— Վանական . . .

— Դաւաճան, ո՞ւր է խեղճ, գոչեց Վանական՝  
վրէժխնդրութեամբ լեցուած շեշտով մը։

— Ներեցէ՛ք . . . թողովեց Տէր Կոմիտաս՝ Վանա-  
կանին առաջը ծռնելի դալով։

— Ի՛նչ դարձաւ քու մէջդ . . . ատ թո՛ւզ գաղա-  
փարներու ննթարկուած էք, յարեց Վանական՝  
բարձր ու անվեհեր ձայնով մը։ Միթէ՞ չարիքը բառ-  
նալու համար չարագործի մը ընկեր ըլլալու է։  
Միթէ՞ կառավարութիւնը մեր շահը նկատի առնելով  
պիտի աշխատի, եթէ ո՛չ իր շահը պիտի փնտռէ մեր  
ընաշնչումին մէջ . . . Խիստ լա՛ւ, մատնենք մեր  
եղբայրները, պատժենք ու հալածենք զանոնք . . .

բայց կը հաւատա՞ք որ այդ՝ կերպով գերութեան  
շղթան մեր վրին վրայ աւելի չենք ծանրացնենք . . .  
կը հաւատա՞ք որ թուրքին ծրագրերը գործադրած չենք  
ըլլար։

Տէր Կոմիտաս դատաւորի մը առջին դանդաղ ա-  
նաղ ոճրագործի մը պէս, բոլոր մարմնով կը դողար  
եւ կը զգար թէ խղճահարութիւնը կը խղճէր զինքը։

— Դուք որ ազգին ցաւերը մեղի հետ լացիք,  
չարունակեց Վանական, ի՛նչ չուտ գաւաճանեցիք  
ձեր սկզբունքին դէմ։ Ո՛չ, իմ ճանչցած քահանան  
չէք դուք . . . այլ պիտի ըսիմ թէ նուիրական սքեմի  
մը տակ ծածկուած լրտես մըն էք, որ կառավարու-  
թեան միջոցակից մը ըլլալով՝ ամեն շարիք կարող  
է գործել։ Բայց . . . Տէր Կոմիտաս, յիշեցէ՛ք որ  
Աստուծոյ տաճարին մէջ կը գտնուիք, յիշեցէ՛ք որ  
ձեր չրթունքները Կուրանի պատուէրներն արտասա-  
նելու համար չէ, յիշեցէ՛ք որ ձեր կոչումը սեւ  
սքեմի մը տակ գարշելի կաշի մը ծածկել չէ . . .  
Մէկ խօսքով՝ քահանան ամենուս ատենի եղող մօլլա  
մը չէ։ Ի՛նչ . . . ատ գաղափարին կը ծառայէի՛ք,  
երբ մատնեցիք Սիւրբաբը . . .

— Սիւրբաբ . . . զողբեց Տէր Կոմիտաս։

— Այո՛։

— Ես մատնեցի . . .

— Մնչո՛ւչտ, դուք մատնեցիք։

— Ամենեւի՛ն։

— Հը՛րմ . . . սուտ կը խօսիք։

(Շարունակելի)



# ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԵԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Սելանիք վիլայեթի նախագահ Կիլիսի-  
թէ եւագըն Մարտ 9—10 տա պիւր  
պոլիկար չէթէսի վէ թիւք ասքէր-  
լէրի պէյնիսէ չէթիտ միւսատէմէ  
պուգու պուլտու։ Ասքէրլէր վէ  
զապիթիլէր քէօյիւ իհաթէ իթմիշ  
իքէն չէթէ գաշմայա մուվաֆազ  
օլտու։ 4 պուլկար վէ 2 զապիթիէ  
էօլտիլէր։

Թիւք մէնպալարընտան ալընան  
մալիւմաթա պիւնաէն, մէզքիւր  
չէթէ օլ էօնատէ պիւր բոււ բա-  
բազը վէ պիւր բոււմէն գըզը տախի  
գաթիլ իթմիշ վէ չօգ խանէրէր  
եագըն։

— Իւշ առէտ բուս հարպ սէ-  
ֆինէլէրի Եւֆայա եէթիշմիշէր։  
Գօմանտանը, զապիթիլէր վէ 500  
ասքէր գարայա չըգուպ, Երուսա-  
ղէմի զիյարէթտէն սօնրա, զըրհ-  
լըլար Մարտ 14 տէ Պէրուլթա միւ-  
թէվէտհիհէն հարէքէթ իթմիշ-  
լէր։

— Մաքէթոնիանըն իւշ զիւ-  
յէթիլի իշիւն մուգարլէր օլան  
իսլահաթը Էտիւրնէ վիլայեթիստէ  
վէ Ալպանիատա տախի իճրա իթ-  
մէք պապընտա Սուլթանըն վատը  
թէքզիպ օլընլօր։ Բօլիթիլէր Գօ-  
րէսքուտանն տէյօր։ «Էվլէթ իքի  
կիւն օ Եօլտա սէօյլէնմէքտէ իտի,  
Աւստրիա վէ Բուսիա էլլիլէրիստէ  
տախի բէսմէն պիւրիթիլմիշ տէր-  
լէրտի, Փաքաթ պուլնըն ասլ ու  
էսասը Եօգ տըր»։

— Ալպանիանըն Եքօտրա վի-  
լայեթիստէ պէյլէր շիմտէ գա-  
տար ժանտարմալըզ վազիթիսիսի  
իճրա իթմէքտէ օլուպ, պուլնա  
մուգապիլ վէրկիլէրի վէ էօշիւր-  
լէրի բէնտիլէր թօրալարազ հիւ-  
քիւմէթէ սէնէվի ճիւզի պիւր շէյ  
վէրմէքտէ օլտըզլարընտան, շիմտի  
նիզամը տախիստէ ժանտարմա  
թէշէթիլ իշիւն վալիսին նէշը իթ-  
տիլի էմիրնամէտէն հիտտէթիլէ-  
նուպ, ըսեանա գալըզմազ իսթէ-  
յօլլար։

— Մաքէթոնիատա ալմանիալը  
զապիթիլէրին մէմուր թային օլըն-  
մասընա գարշը Բուսիա բրօթէսթ  
իթմիշ տիւր։ Պուլնուլ իւզէրիսէ,  
Գէօլիսիշէ Զայրաշիկ նիւմ բէսմի ալ-  
ման կազէթասը տէյօր։ «Ալման  
զապիթիլէրին Մաքէթոնիատա ժան-  
տարմա զապիթի թային օլընմա-  
լարընա իմէրաթօր վիլէլմ միւ-  
սաաւտէ վէրմէք իսթէմէյօր։ Փա-  
քաթ Մաքէթոնիատա պուլլիւն  
թիւք օրտուսընտա անլէրին միւ-  
ֆէթթիլ թային օլմալարընա բազի  
օլապիլիւր։ Թիւք վէ ալման տէօվ-  
լէթիլէրի պէյնիստէքի մուգապէլէ-  
նամէ մուճէպիսէ, Թիւքիստա  
խըտմէթի ասքէրիէտէ պուլընան  
ալման զապիթիլէր ասքէրիէ վա-  
զիթէսի իլէ մէմալիթին հէր պիւր

Թարաֆընա կէօնտէրիլէ պիլիլիլէր,  
Եւլընըզ Պապը Ալիսին էմիսէ  
իթաաթ իթմէք շարթը իլէ»։

ՏԱԽԻԼԻՅԷ

Վիւքէլատան հարպիէ նազըրը  
ժէնէրալ Բարրիքօվըն իսթիֆաաընը  
իտուպ, սօնրա կէրի ալտըզընը  
եագըն ըտըգ։ Պիլալէրէ մուսա-  
իլէյհին թէքրար վէ գաթիէն իս-  
թիֆա իթտիլի թաստիգ օլընը-  
յօր։ Ժէնէրալ Բարրիքօվըն իս-  
թիֆաաընըն սէպէպի՝ հարպիէ  
պիւտհէսի իւզէրիսէ, մուհարէպէ  
հազըրըզը իշիւն՝ 10 միլիոն ֆր-  
հէնի պիւր գաւմիաթ իսթէմէսին-  
տէն նէշաթ իթմիշ տիւր։ Հէյէթի  
վիւքէլա՝ Եննի հարպիլէ հազըր-  
ըզլարըն Էվրոբա տէօվէթիլէրի  
իւզէրիսէ ֆէնա թէէսիլ իտէճէ-  
կիսի ալշիւնէրէք՝ Բարրիքօվըն  
թալէպիլիլէր տէտ իթմիշ իտի։

Վիւքէլա բէյիսի Տօք Տանէվ  
վէ ժէնէրալ Բարրիքօվ մէսէլի  
Ֆէլս։ Բրէնա հազըրէթիլիսէն շախ-  
սէն անլաթմազ իշիւն Էվրօնիս-  
կրատ բէօշիլիսէ կէլմիշլէր իտի։  
Մ. Բարրիքօվ իսթիֆաաընը Էվ-  
րիսէ իսրար իթմիշ իւզէրիսէ  
Ֆէլս։ Բրէնա իսթիֆաաընը գապուլ  
էլլէմիշ վէ լէլալէթէ կէօրի  
ժէնէրալ-մայօր Նիքօֆորօվ հար-  
պիէ նազըրը նասպ օլընմազ  
տըրլար։

Փաքաթ սօնրա անլաշըտը քի  
հարպիէ նազըրըզը տախի վիւ-  
քէլա բէյիսի Մ. Տանէվէ թիւ-  
տի օլընմիշ տըր։ Ժէնէրալ Բա-  
րիքօվըն իսթիֆաաընը Ֆէլսամ  
Բրէնա գաթիլէն գապուլ իթմէ-  
յօրապ, Եւլընըզ տէօրտ ալ Էվրօ-  
բատա վազըթ կէշիլմէք իշիւն  
անա միւսատաւէ վէրմիշ։

— Սօֆիատա Էքօ տէ Պալլաւն  
իսթիստէ ֆրանսըզմա հաթիթալըզ  
պիւր կազէթա նէշը օլընմայա պաշ-  
լատը։ Մէզքիւր կազէթա Մ. Բօլ  
Ասքէրեանըն միւտիլիլէթի ալ-  
թընտա նէշը օլընլօր։

Բ Ո Ւ Ս Ի Ա

Ձար Նիքօլա պիւր իւքազ նէշրի  
իլէ, բէնտէրիստէն քէնտիսինէ մի-  
րաւ գալըշ օլան ալթօկրատըզը  
այնը իլէ մուհաֆազա իտէճէկիսի,  
քէզա օրթօտօքս մէզհէպիսին թէէ-  
սիլիսի հիմայէ էլլէյէճէկիսի պէ-  
յան իտէրէք, ասըզատէկիսինըն  
վէ առի էհալիսին հուգուգընը վը-  
քայէ իթմէք իշիւն լազըմ կէլէն  
թէտապիլիլէր իճրաաընը վատ իտէ-  
յօր։

Ճաի թաաճուպ տըր քի Ձար  
հազըրէթիլէրի ասըզատէկիսինըն վէ  
սէրվէթ սահիպի օլանլարըն հու-  
գուգընը մուհաֆազ իթմէկէ իգ-  
թիլա կէօրիյօ։ շու հալտէ առի  
էհալիսին հուգուգընը էվլէթիլէրէ  
գարշը նա՞սըլ մուհաֆազա իտէճէք-  
պուլնու մուհաֆազա իթմէք իշիւն  
ասըզատէկիլէր վէ սէրվէթ սահիպ-  
լէրի սըգմազ լազըմ կէլէր, զիւրա

Փաքիլ էհալիսին հազարընը ա-  
յազ ալթընա ալան վէ անը Եէսիլ  
կիպի պիւր գուրու էքմէկէ մուգա-  
պիլ շալըշտըրան, քէօլէլիք իթտի-  
րէն զէնկիլիլէր վէ ասըզատէլէր  
տիլիլէր։ Եու հալի հազըրտա պուլն-  
լարըն նէ՝ թաճիլիլի օլապիլիլ-  
զէնկիլիլէր աճէպա հիւքիւմէթտէն  
մի թաճիլ տիլիլէր։ պու տախի  
թասապիլուր օլընմազ, զիւրա հիւ-  
քիւմէթ, ասըզատէլէր վէ զէն-  
կիլիլէր՝ միւթթէֆիգ պիւր շիքէթ  
կիպի՝ առի էհալիլի ֆազիլիլէրէ էգ-  
մէքտէ տիլիլէր։ պուլնլարը, Եւլը-  
նըզ պուլնլարը վըգայէ իթմէք լա-  
զըմ տըր։

ԱԼՊԱՆԻԱ

Վիւքէլատան Մարտ 11 թարիլիլէ  
Արնապուլտըզ անլաշընտան տօլալը  
աթիլտէքի մալիւմաթ վէրիլմիշ տիւր։

«Թիւք հիւքիւմէթի Մաքէ-  
թոնիատա իսլահաթ իճրա իթմէք  
պապընտա՝ տահա զիյառէ ա-  
նապուլտարտան միւշըլաթա թէ-  
սատիլիլէր իտէյօր, նասըլ տէ էօյլէ  
պէքէլէնիլիլէր իտի։ Մէթօշիտէ,  
Տիւքօվա (Էսկի Սիւպիա) ճիւլա-  
լընտա, 20000 իսլամ արնապուլտ-  
լար հազըրլանըյօլլար Հիլմի բա-  
շայա մուխալէֆէթ իթմէյէ Հիլ-  
մի բաշա շու կիւնլէրտէ ժէնէրալ  
Շէմսի բաշա իլէ Սքիպտէ պուլ-  
լընլօր իսլահաթը իճրա իթմէք  
վէ ալնապուլտարըն սիւհալարընը  
թօրլամազ էֆքեարը իլէ։

«Եքօտիա ճիւլարընտա պուլլ-  
նան կաթիլիլէր արնապուլտար, Միւ-  
տիլիլէր վէ Մալիսօրլար՝ քէնտի  
նիւմ սէրպէսթիլիլէրիսի գալտըր-  
մազ նիլէթի իլէ Էսատ բաշանըն  
ասքէրլէր Բազըրլէրիսէ կիտէճէկիս-  
տէն գօրգուպ հարէքէթ իտէյօր-  
լար։

«Գէզա Եանեա ճիւլարընտա պուլ-  
լընան օրթօտօքս արնապուլտար  
խօշնուտիլիլէթսիլիլէր կէօսթէրիլիլ-  
լար։ Նիհայէթ Մաքէթոնիա միւշ-  
քիւլաթընտան սօնրա Եագընտա  
Ալպանիա միւշըլաթը պաշ կէօս-  
թէրէճէք տիւր։ Բէք չօգ տաիլէ-  
լիլտէ շու զաննիլաթ վար տըր  
բի՝ իթիւք տէօվէթի շու հալլէր-  
տէն թաճիլիլէր կէօսթէրմէթտէն  
մաաաա մէմուլն տախի գալըյօր՝  
քի պու պէհանէ իլէ Էվրոբատան  
թէքիլիլէր օլընան իսլահաթը իճրա  
իթմէօթին»։

Յ Ր Ա Ն Ս Ա

Բարըլմանտա մէպուսանտան Մ.  
տը Բրէսանսէ Եարգ մէսէլէսին-  
տէն պահալէ Մաքէթոնիա իսլա-  
հաթընա աթիլիլէր նազար իտէրէք,  
Էրմէնիստան մէսէլէսի իշիւն տա-  
խի շու Եօլտա սէօյլէմիշ տիւր։  
«Էվրոբանըն վիճտանընա իհալէ  
օլընմիշ օլան Էրմէնիստանըն՝ իս-  
լահաթ մէսէլէսի տախի նէ  
իշիւն թահթը թէլէթիլիլէր ալըն-  
մամը տըր։ պու խուսուստա բրօ-  
թէսթ իտէրիւմ Էվրոբա տիլիլէ

մաթըլըն մաղուպիլիլէրի թազ-  
տա իթմէք մի (նուիրադործի) իս-  
թէյօրաընըզ»։

ՍԵՐՊԻԱ

Ռուս Ձարը Սերպիայա օն մի-  
լիոն առէտ Պէրտան թիւֆէնլիլ-  
րիսէ մախուսա ֆիշէնկ հէտիլէ  
վէրմիշ տիւր։ Բէտէրի Ձար Ալէք-  
սանար իւշիւնճի վազթընտա Սեր-  
պիա օրտուսընա 10,000 Պէրտան  
թիւֆէնկիլիլէր իհաա իթմիշ իտի-  
իշթէ մէքքիւր ֆիշէնկիլիլէր շիմտի օ  
թիւֆէնկիլիլէր իսթիլալ օլընմազ  
տըրլար։ զիւրա օլ վազըթ թիւ-  
ֆէնկիլիլէր իլէ պէրապէր վէրիլմիշ օ-  
լան ֆիշէնկիլիլէր կէշէն սէնէ Պէլ-  
կրատ գալէսինտէ Եանալարը ըտը։

## ԹԻԻՃՃԱՐԻՅԷ

ՎԱՌՆԱ, 5 Մարտ

ՉԱԽԻԼԻՅԷ

|                                                                                     |  |
|-------------------------------------------------------------------------------------|--|
| ՊՈՒՂՏԱՅ                                                                             |  |
| Վազօն Լիպ. 57-58 հքթ. 9.20/9.60                                                     |  |
| Արապա Լիպ. 53-62 հքթ. 9. —/10.40                                                    |  |
| ԱՐԲԱ                                                                                |  |
| Վազօն 100 քիլօ 10.30/10.40                                                          |  |
| Արապա 45-50 լիպ. հքթ. 6. —/6.40                                                     |  |
| ՉԱՎՏԱՐ                                                                              |  |
| Վազօն 53 54 լիպ. 7.40/7.80                                                          |  |
| Արապա 8. —/8.40                                                                     |  |
| ՖԻՍՈՒԼԻԱ 100 քիլօ 16. —/22. —                                                       |  |
| ԵՆՈՒԼԱՅ                                                                             |  |
| Վազօն 100 քիլօ 10.20/10.60                                                          |  |
| Արապա հէքթ. 5.40/5.50                                                               |  |
| ՄԻՍԻՐ                                                                               |  |
| Վազօն լիպ. 56-57 հէք. 8. —/8.20                                                     |  |
| Արապա լիպ. 56-57 հէք. 7.80/8.20                                                     |  |
| ՏԱԼԸ                                                                                |  |
| Վազօն 100 քիլօ 9.60/10. —                                                           |  |
| Վազօն մուսթէլէսի ալթուլն ֆը-<br>րանլէր, արապա կիւմիլիլէն, նար-<br>լէօն 20.60 ֆրանք։ |  |

ԲԱՄՈՒԴ

Վարնա մաղապալարընտա իրիք սա-  
թըլարը։  
Ինկիլիլէր իրիլիլի Ն. 8-14 10. —  
» » Ն. 18.24 12. —  
Ենլիլ իրիլիլ Ն. 8-14 9.60  
Աթըլմըշ բամուք հօդա 2. —  
Բամուլէ ֆիլաթլարը Եիւքէլիլէք-  
տէ տիւր։

Թ Ի Ա Պ Ա Ր Տ Ը

|                                                                                                                                                        |  |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|
| Թիւպարսի Ա. հատորը զրկած Ենք<br>մեր հետեւեալ գործակալներուն։<br>ուստի այդ խիստ հետաքրքրաշարժ ու<br>չահեկան գիրքը ստանալ վախաքօղ-<br>նիւրը կրնան գիտիլ։ |  |
| Պուրիպ Տ. Արտաշէս Հարենցի                                                                                                                              |  |
| Ֆիլիպի » Գ. Թիւթիւնճեանի                                                                                                                               |  |
| Շուրլա » Ասլան Տօնիկեանի                                                                                                                               |  |
| Ռուշուր » Սարգիս Մանուկեանի                                                                                                                            |  |
| » » Է. Գալիլէյեանի                                                                                                                                     |  |
| Սօֆիա » Ասատուր Մկրտիչեանի                                                                                                                             |  |
| Տօպրիշ » Նիկողոս Սիսակեանի                                                                                                                             |  |
| Սիլիստր » Յ. Սարգիսեանի                                                                                                                                |  |
| Սիլիլէն Տէր Վաղինակ Հօր                                                                                                                                |  |
| Պուրթշ » Յովհ. Փափազեանի                                                                                                                               |  |
| » » Յովհ. Պիպէնճեանի                                                                                                                                   |  |
| Բօնապուլ » Սիսակ Մեկիբեանի                                                                                                                             |  |
| Կաշա » Տէր Ղևոնդ Հօր                                                                                                                                   |  |
| » » Գրիգոր Յակոբեանի                                                                                                                                   |  |
| Գաւիթ » Կ. Էրզնկազեանի                                                                                                                                 |  |
| Աղէսան » Ս. Մարպանեանի                                                                                                                                 |  |
| Պուրն » Ձ. Հայրենեանի խմբ.                                                                                                                             |  |
| Ֆիլիպսի » Կ. Մարտիկեանի                                                                                                                                |  |
| Ռուս » Յակոբ Ֆրանքեանի                                                                                                                                 |  |
| 170 Սաւուր Պրիճ                                                                                                                                        |  |

Одговорникъ Н. Драгулевъ  
Պեւ. на Хр. Н. Войниковъ—Варна